ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/73

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Սպիտակի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Տրակ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Տրակ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Գրիգորյանի

Գնման Մրցույթի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, գրեյդերի և ավլող փոշեկուլ մեքենայի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Տրակ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 03.06.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 01.06.2020թ.-ի թիվ 4 արձանագրության 1-ին կետը և ընդունել «Ֆալկոն» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 03.06.2020թ.-ին:

04.06.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/73 համարի ծածկագիրը և հրապարակվել www.gnumner.am կայքում:

10.06.2020թ.-ին և 22.06.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 10.06.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.06.2020թ.-ին:

2. <u>«Տրակ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Տրակ» ՍՊԸ-ն 03.06.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքաբերն ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել պատվիրատուի կողմից հայտարարված ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/23 ծածկագրով ընթացակարգին:

Գնահատող հանձնաժողովի 20.05.2020թ-ի N 2 արձանագրության համաձայն՝ «Ֆալկոն» ՍՊԸ-ի և Բողոքաբերի կողմից ներկայացված հայտերը հաստատված չեն եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Նույն արձանագրության համաձայն գնահատող հանձնաժողովի մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և մասնակիցներին առաջարկել է շտկել անհամապատասխանությունները:

Բողոքաբերը գնահատող հանձնաժողովին տեղեկացրել է, որ իր կողմից ներկայացված հայտը հաստատված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ և շտկելու անհարժեշտություն չկա:

21.05.2020թ-ի N 3 արձանագրության 1-ին պարբերությամբ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ բողոքաբերի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության 2-րդ պարբերությամբ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ֆալկոն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը, սակայն վերջինիս գնային առաջարկի «ընդհանուր գինը» սունյակը լրացված է միայն թվերով:

«Ֆալկոն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժելու կամ բավարար գնահատելու նկատառումներից ելնելով՝ գնահատող հանձնաժողովը որոշել է պարզաբանում ստանալու նպատակով դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն և կասեցնել նիստը:

Գնահատող հանձնաժողովի 01.06.2020թ-ի N 4 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «Ֆալկոն» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

Գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի 01.06.2020թ-ի N 4 արձանագրությունը, կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջների խախտմամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է

անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Վերը նշված իրավական նորմի տառացի մեկնաբանության արդյունքում կարելի է փաստել, որ գործադիրը «ա»-ից «զ» պարբերություններով սահմանել է այն բացառիկ դեպքերը, որոնց առկայության պայմաններում գնահատող հանձնաժողովը չպետք է մերժի մասնակցի հայտը, հետևաբար կարելի է արձանագրել, որ «ա»-ից «զ» պարբերություններով չնախատեսված դեպքերում գնահատող հանձնաժողովն ուղղակի պարտավոր է մերժել մասնակցի հայտը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ֆալկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի բոլոր սյունակներում տառերով գումարը նշված չէ: Հետևաբար, նման պայմաններում գնահատող հանձնաժողովը ոչ թե պետք է կասեցներ նիստը և պարզաբանման համար դիմեր ՀՀ ֆինանսների նախարարություն, այլ պետք է «Ֆալկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատեր անբավարար և մերժեր:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով ընթացակարգի գնահատող

հանձնաժողովին դադարեցնել 01.06.2020թ.-ի թիվ 4 արձանագրության 1-ին կետը և ընդունել «Ֆալկոն» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում:

3. <u>Սպիտակի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 04.06.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/8271-2020 գրությամբ դիմել է Սպիտակի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Տրակ» ՍՊԸ-ի կողմից 03.06.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 09.06.2020թ.-ին ներկայացված թիվ 034/27-945 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սպիտակ համայնքի կարիքների համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հայտարարվել է ՀՀ ԱՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/23 ծածկագրով երկու չափաբաժնով գնման ընթացակարգ, որի գնման առարկա է հանդիսանում գրեյդեր և ավլող, փոշեկուլ մեքենա, որը հանդիսանում է սուբվենցիոն ծրագիր:

Նշված ընթացակարգին հայտ են ներկայացրել «Ֆալկոն» ՍՊԸ-ն, «Տրակ» ՍՊԸ-ն և «Ագրոտեխնիկ ԱՄ» ՓԲԸ-ն:

«Տրակ» ՍՊԸ-ի և «Ագրոտեխնիկ ԱՄ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

«Ֆալկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հաստատված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչի պատճառով գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել՝ մինչև նիստի կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը (նիստը կցվում է):

«Ֆալկոն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը, սակայն վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկը լրացված է եղել միայն թվերով:

Գնահատող հանձնաժողովը 21.05.2020թ. թիվ 3 նիստով որոշում է ընդունել նիստը կասեցնել և ՀՀ ֆինանսների նախարարությունից պարզաբանում ստանալ հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված

«Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի մեջ հստակ նշված չէ տվյալ դեպքում մասնակցի ներկայացված հայտը մերժման ենթակա է, թէ ոչ (գրությունը կցվում է):

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.05.2020թ. տրամադրված պարզաբանումը՝ գնահատող հանձնաժողովը բավարար է գնահատել «Ֆալկոն» ՍՊԸ-ի հայտը (պարզաբանումը կցվում է):

Հաշվի առնելով վերոգրալը, Սպիտակի համայնքապետարանը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կատարած գործողությունները օրինաչափ են, կայացրած որոշումները բխում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներից: Ինչ վերաբերում է «Տրակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքին, Սպիտակի համայնքապետարանը գտնում է, որ այն անհիմն է և ենթակա է մերժման:

Միաժամանակ հայտնվում է, որ կապված Հայաստանում կորոնավիրուսի վարակի տարածման հետ Սպիտակի համայնքապետարանի ներկայացուցիչը չի կարող ներկա գտնվել բողոքի քննության նպատակով 10.06.2020թ. ժամը 15:45-ն ք. Երևան, Կոմիտաս 54բ հասցեում կայանալիք նիստին:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/73 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Սպիտակի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից գրեյդերի և ավլող, փոշեկուլ մեքենայի ձեռքբերման նպատակով 13.05.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտ են ներկայացրել նաև «Տրակ» ՍՊԸ-ն և «Ֆալկոն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

«Ֆալկոն» ՍՊԸ-ն 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ներկայացրած գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	ԳՐԵՅԴԵՐ	46 500 000	3 500 000	10 000 000	60 000 000

2	ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ԴԻԶԵՍ (ԷԼԵԿՏՐԱԿԱՆ) ԱՎԼՈՂ ՄԵՔԵՆԱ	14 500 000	1 100 000	3 120 000	18 720 000

Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 21.05.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ֆալկոն» ՍՊԸ-ի հայտում գնային առաջարկի «ընդհանուր գինը» սյունակը լրացված է միայն թվերով: Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի մեջ հստակ նշված չէ տվյալ դեպքում մասնակցի հայտը ենթակա է մերժման թե՛ ոչ, որոշել է նիստը կասեցնել և ՀՀ ֆինանսների նախարարություն գրություն ուղարկել վերը նշված հարցի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով:

Հանձնաժողովի 01.06.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանումը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է «Ֆալկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի պատասխան Պատվիրատուի 21.05.2020թ.-ին ուղարկված թիվ 802 գրությանը, 26.05.2020թ.-ին տրված թիվ 01.1/26-1/7642-2020 գրությամբ հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Իսկ նույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Վերոգրյալով պայմանավորված՝ հայտնել են, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Միաժամանակ հայտնել են, որ մասնակիցների գնային առաջարկների կազմմանը և դրանց գնահատմանը ներկայացվող պահանջները սահմանված են ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 2-րդ և 40-րդ կետի 4-րդ ենթակետերով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Տրակ» ՍՊԸ-ի կողմից 03.06.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: … :

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում

առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ «Ֆալկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը հակասում է Կարգի դրույթներին, ուստի և հայտը ենթակա է մերժման, քանի որ Սպիտակի համայնքապետարանի կողմից գրեյդերի և ավլող փոշեկուլ մեքենայի ձեռքբերման նպատակով 13.05.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգին մասնակցելու

նպատակով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած «Ֆալկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գնի սյունակները լրացված են միայն թվերով:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև հավելել, որ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի ընդհանուր բովանդակային մեկնաբանության արդյունքում ավելի քան հստակ է, որ գործադիրը, սահմանելով գնային առաջարկում առակ որոշ անհամապատասխանությունների վերաբերյալ վերապահում, այնուամենայնիվ ամբողջացրել է դրանք՝ կարևորելով տառերով գրված գումարների առկայությունը, որպիսի հանգամանքով՝ բացառել է ցանկացած տարընկալում և ապահովել Օրենքի 34-րդ հոդվածի դրույթների կիրառելիությունը, այն է՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

Անդրադառնալով Հանձնաժողովի 01.06.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ վկայակոչված այն փաստին, որ Հանձնաժողովը որոշել է «Ֆալկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար՝ հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանումը, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ 26.05.2020թ.-ին տրված թիվ 01.1/26-1/7642-2020 գրությամբ գնումների գործընթացի կարգավորումը և համակարգումն իրականացնող լիազորված մարմինը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, հայտնել է ընդամենը, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, սույն դեպքում՝ գնային առաջարկների կազմմանը և դրանց գնահատմանը ներկայացվող պահանջները սահմանված են ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 2-րդ և 40-րդ կետի 4-րդ ենթակետերով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում, «Ֆալկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գնի սյունակները միայն թվերով լրացված լինելու պարագայում, վերջինիս կողմից ներկայացված հայտը ենթակա էր մերժման, քանի որ այս դեպքում գնային առաջարկում վերը նշված անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում կիրառելի չէ Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկելու հնարավորությունը, ուստի ընդհանուր գնի սյունակի միայն թվերով

լրացված լինելու հանգամանքը պետք է գնահատել որպես գնային առաջարկին վերագրվող անհամապատասխանություն՝ որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից «Ֆալկոն» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին կայացված որոշումն իրավաչափ չէ, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի խախտումներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տրակ» ՍՊԸ-ի կողմից 03.06.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/73 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել 01.06.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացված որոշումը,

2. ընդունել «Ֆալկոն» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**